Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն **23.6/[53734]-10**

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐ 16-ԻՆ
ԺԱՄԸ 10:30-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ՝

Ա. Գևորգյան	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Ն. Երիցյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Տ. Դավթյան	ՀՀ ֆինանսների նախարար
Մ. Վարդանյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Գ. Դանիելյան	ՀՀ արդարադատության նախարար
Հ. Բեգլարյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ
Մ. Թումասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Հրավիրվածներ՝

Ա. Աղաջանյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Հ. Նաղդալյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Վ. Խուրշուդյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Ֆ. Բաշոյան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալ
Ա. Ղարիբյան	ՀՀ վարչապետի խորհրդական
Հ. Մկրտչյան	ՀՀ վարչապետի օգնական
Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի

	ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ
Ֆ. Փիրումյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպությունե ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն
Է. Ավետյան	ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական կառավարման կենտրոնե պետական հիմնարկի տնօրեն
Ա. Սիմոնյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպությունե ՊՈԱԿ-ի սոցիալական պաշտպանության, վերաբնակեցման և բնապահպանության բաժնի պետ
Լ. Վարդանյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպությունե ՊՈԱԿ-ի թարգմանչուհի
Ջ. Ֆրեզեր	«Egis Bceom Internationalե, Թիմի ղեկավար
Դ. Հովսեփյան	«Egis Bceom Internationalե Թիմի ղեկավարի տեղակալ
Հ. Նորեկյան	«Egis Bceom Internationalե, նախագծման ինժեներ

Երևան-Աշտարակ 11,71 կմ երկարությամբ գոյություն ունեցող ճանապարհային հատվածի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման մրցույթի արդյունքների հաստատում

(Հ. Բեգլարյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանի առաջարկությանը համապատասխան, ԱՋԲ-ի կողմից գրավոր եզրակացությունն ստանալուց հետո համարել հաստատած Երևան-Աշտարակ 11,71 կմ երկարությամբ գոյություն ունեցող ճանապարհային հատվածի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման մրցույթի արդյունքները։

2. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Բազմափուլ ֆինանսավորման գործիքի վերաբերյալ Ասիական զարգացման բանկի 2010 թվականի հոկտեմբերի 25-ից նոյեմբերի 4-ն այցելության հուշագրի հաստատում

(Ֆ. Փիրումյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանին և ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանին՝ վերանայել ժամկետայնության վերաբերյալ (2011 թվականի սեպտեմբերի 30-ին ծրագրի ավարտից հետո ցանկացած անավարտ աշխատանք պետք է իրականացվի ՀՀ կառավարության միջոցների հաշվին) նախապայմանը, ըստ որի ժամկետային երկարաձգումը կենթադրի երկկողմանի համաձայնություն.

2) հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպությունե ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ֆ. Փիրումյանին՝ խմբագրել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Բազմափուլ ֆինանսավորման գործիքի վերաբերյալ Ասիական զարգացման բանկի 2010 թվականի հոկտեմբերի 25-ից նոյեմբերի 4-ն այցելության հուշագրի նախագիծը՝

ա. Հողային օրենսգրքի փոփոխված նոր դրույթներին համապատասխան,

բ. հողակտորների ձեռքբերման արդյունքում օտարվող ընդհանուր հողակտորի 30 տոկոսից պակաս մակերեսի դեպքում ամրագրել առավելագույն չափ, որի դեպքում հողակտորի մակերեսը չի գերազանցի 5000 քառ. մետրը.

գ. ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար Ա. Գևորգյանի առաջարկությանը համապատասխան ամրագրել դրույթ, ըստ որի, եթե հողի սեփականատերն օտարման արդյունքում կունենա 2 և ավելի հողակտոր, որոնք չունեն ընդհանուր սահման, ապա տվյալ պարագայում սեփականատերը կարող է պահանջել օտարելու նաև նվազագույն մակերեսով հողակտորը,

դ. ՀՀ արդարադատության նախարար Գ. Դանիելյանի հետ համատեղ 2-րդ փուլի պայմանագրում նախատեսել առանձին կետ, ըստ որի ձեռքբերված հողակտորների հետագա օտարման իրավասությունը կվերապահվի ՀՀ կառավարությանը.

3) հաստատել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Բազմափուլ ֆինանսավորման գործիքի վերաբերյալ Ասիական զարգացման բանկի 2010 թվականի հոկտեմբերի 25-ից նոյեմբերի 4-ն այցելության հուշագրի վերջնական խմբագրված տարբերակը։

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի տրանշ 2՝ Աշտարակ-Թալին հատվածի ծրագծին հավանություն տալու մասին

(Ֆ. Փիրումյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդհանուր առմամբ հավանություն տալ «Egis Bceom Internationalե ընկերության կողմից կատարված նախագծային աշխատանքներին.

2) հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպությունե ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ֆ. Փիրումյանին՝ հաշվի առնելով ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար Ա. Գևորգյանի, ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանի դիտողություններն ու առաջարկությունները, կառավարման խորհրդի հաջորդ նիստի քննարկմանը ներկայացնել նախագծային տարբերակների հստակ տարբերություններն ու ֆինանսական գնահատականները՝ հիմնված այն սկզբունքի վրա, ըստ որի ճանապարհի կառուցումը պետք է լինի սոցիալապես հանդուրժելի։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՄՈՒՇԵՂ ԹՈՒՄԱՍՅԱՆ